ԵՊՄԱՊՁԲ26-16 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Եղեգնաձոր

17.04.2026թ

Մասնակցում էին

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Կարեն Ասատրյան- «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն

Անդամներ՝ Տիգրան Թորոսյան- «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի գլխավոր բուժքույր

Ալբերտ Մարգարյան- «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրենի տնտ. գծով տեղակալ

Հասմիկ Կարապետյան -գնումների համակարգող

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Մրցույթը կազմակերպվել է մեկ անձից գնում <Իրա Ինվեստմենթ Գրուպ>ՍՊԸ-ից ՀՇ սարքի, ինժեկտորի և UPS-ի գնման համար՝ համաձայն Գնումների մասի օրենքի և ՀՀ կառավարության 04,05,2017թ. թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետի աղյուսակի 22-րդ մասով՝ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիման վրա: Էլեկտրոնային եղանակով, հրավերը ուղարկվել է Իրա Ինվսթ Մենթ Գրուպ ՍՊԸ-ին, որի արդյունքում տվյալ կազմակերպությունը ներկայացրել է բոլոր պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Անուշ Խաչատրյան

Ալբերտ Մարգարյան

Գնումների համակարգող՝ Հասմիկ Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 7/Կ

Ք.ԵՂԵԳՆԱՁՈՐ 16.04.2025թ.

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ պարոն Ավագ Ավանեսյանի մեզ ուղղված N 03/26/22632-2025 գրությունը, համաձայն որի 1 անձից գնումը կարող ենք հայտարարել <<Գնումների մասին>> օրենքի 23-րդ հոդվածով, իսկ դրանց կիրարկման պայմանները՝ ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի <<դ>> պարբերությամբ, 23-րդ կետի 4-րդ ենթակետով և 10-րդ գլխով, ՀՀ առողջապահության նախարար տիկին Անահիտ Ավանեսյանի 12.03.2026թ. Վայոց ձորի մարզպետ պարոն Վահանգ Արսենյանին ուղղված N01/13/1505-2026 գրությունը, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետ պարոն Վահագն Արսենյանի, մարզպետի աշխատակազմի կողմից տվյալ կարգով գնումներն իրականացնելու 14.04.2026թ. ստացված N 01/13/2041-2026 գրությամբ համաձայնությունը, ունենալով 4 տարբեր կազմակերպություններից առկա սարքերի (ՀՇ սարք, ինժեկտոր և UPS) գնահատման փաստաթղթեր շուկայական և լիկվիդացիոն արժեքներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սարքավորումները արդեն իսկ տեղակայված են պոլիկլինիկայի տարածքում և միակն են Վայոց ձորում, որոնց բացակայությունը կբերի առողջապահական համակարգում մեծ խնդիրների /ամսական իրականացվում է 250-300 հետազոտություն/, իսկ առկայության շնորհիվ բուժառուները ազատվում են Երևան հետազոտման գնալու հավելյալ ծախսերից և դժվարություններից, իսկ որոշ դեպքերում առանց ՀՇ հետազոտման Երևան տեղափոխումը կդառնա ռիսկային և անհնար, ինչպես նաև <<Իրա Ինվեսթիմենթ Գրուպ>> ՍՊԸ-ի 30.03.2026թ. մեզ ուղղված Եղեգնաձորում 2026թ ապրիլի 30-ի դրությամբ ՀՇ կենտրոնի գործունեության դադարեցման վերաբերյալ գրությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նոր ՀՇ սարքի ձեռքբերումը ավելի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ

ծախսատար է և ժամանակի առումով պահանջվում է առնվազն 180 օր /պատվերից մինչև տեղադրումը/՝

Հրամայում եմ՝

Իրականացնել 1 անձից գնում <<Իրա Ինվեստիմենթ Գրուպ>> ՍՊԸ–ից ՀՇ սարքի, ինժեկտորի և UPS-ի՝ համաձայն Գնումների մասին օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետի աղյուսակի 22-րդ մասով՝ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով: Առաջարկվող գինը սահմանել 90 000 000 /իննսուն միլիոն/ ՀՀ դրամ:

Տնօրեն՝ Կ.Ա.Ասատրյան